ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 մայիսի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

63
(3272)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԴԻՊԼՈՄ՝ ԱՌԱՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ



ՀՀ առողջապահության նախարարության օրենսդրական փոփոխություններից հետո, երբ հիվանդանոցների տնօրենների համար բժշկական կրթությունը այլեւս պարտադիր չէ, համակարգում ի հայտ է եկել ուշագրավ գործընթաց. պետական ենթակայության մի շարք բժշկական կազմակերպությունների տնօրեններ ընդունվել են Ալեքսանդր Բազարջյանի կողմից ղեկավարվող ՀՀ ԱՆ Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի կլինիկական օրդինատուրա՝ «Հանրային առողջապահություն» մասնագիտությամբ: Խոսքը 1 տարի 2 ամիս տեւողությամբ առկա ուսուցման մասին է, մինչդեռ այդ անձինք միաժամանակ ղեկավարում են բժշկական կենտրոններ, իսկ նրանց մի մասը նաեւ զբաղվում է քաղաքական գործունեությամբ:

Ի պատասխան «Առողջության իրավունք» հկ նախագահ Անուշ Պողոսյանի բարձրաձայնումների՝ Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից հնչել է պարզաբանում, թե «ուշ ժամերի» եւ հանգստյան օրերին են կազմակերպվում կրթական պրոցեսները: Այս բացատրությունը ոչ թե փակում, այլ ավելի է խորացնում հարցերը: Եթե Ալեքսանդր Բազարջյանի կողմից կազմակերպվող ուսուցումն իսկապես առկա է, ապա ե՞րբ եւ ինչպե՞ս են տնօրենները հաճախում դասերին՝ հիվանդանոցները կառավարելուն զուգահեռ: Եթե դասերն անցկացվում են աշխատանքային ժամերից դուրս, արդյո՞ք դասախոսները ստանում են արտաժամյա վարձատրություն, ո՞ր բյուջեից եւ ինչպե՞ս է դա ձեւակերպվում: Իսկ եթե չեն հաճախում կրթական հաստատություն, ապա ինչպե՞ս են ձեւավորվում մասնագիտական որակավորումները: Ալեքսանդր Բազարջյանը պետք է մանրամասն պատասխանի հարցերին, թե քանի դիպլոմ է մինչ օրս բաժանել, ինչ իրական որակավորում են ստացել կրթվածները:

ՀՀ առողջապահության նախարարությունը, Առողջապահության ազգային ինստիտուտը, Պետական վերահսկողական ծառայությունն ու տեսչական մարմինները պարտավոր են պարզաբանել՝ սա իրական առկա կրթությո՞ւն է, թե՞ համակարգի ներսում դիպլոմների ձեւական տրամադրման մեխանիզմ, որ թղթի վրա ամեն ինչ կարգին լինի:

Այս մասով մեր հարցումների պատասխանները՝ առաջիկայում:

Հշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության երբեմնի ամենաակտիվ եւ ամենակարկառուն դեմքերից մեկը՝ Անդրանիկ Քոչարյանը, այս ընտրություններին ակնհայտորեն կորցրել է իր երբեմնի ազդեցությունն ու դիրքերը կուսակցության ներսում: Եթե նախկինում նա համարվում էր իշխանության առանցքային եւ ամենաաղմկոտ պատգամավորներից մեկը, ապա այժմ ՔՊ նախընտրական ցուցակում հայտնվել է ընդամենը 64-րդ հորիզոնականում: Քոչարյանի քաղաքական «անկումը» շատերը կապում են վերջին տարիներին նրա շուրջ ձեւավորված բազմաթիվ սկանդալների հետ, որոնք լուրջ հանրային դժգոհություն էին առաջացրել: Ամենահիշվող աղմկահարույց հայտարարություններից մեկը վերաբերում էր նրա որդու՝ բանակում չծառայելուն: Լրագրողների հարցին, թե ինչու որդին չի ծառայել բանակում, պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը պատասխանել էր. «Իմ տղան շատ բարձրակարգ տղա է, դու նրա գիտելիքների չափ որ ունենաս, դու էլ չես ծառայի»: Այս հայտարարությունը լայն քննադատության արժանացավ, քանի որ հանրության մոտ տպավորություն ստեղծվեց, թե իշխանական պատգամավորի ընկալմամբ՝ բանակում ծառայում են միայն «ոչ բարձրակարգ» քաղաքացիները, մինչդեռ «գիտելիք ունեցողները» կարող են խուսափել ծառայությունից: Հիշեցնենք, որ հենց Անդրանիկ Քոչարյանն է 2019թ. հունվարի 18-ից մինչ օրս ղեկավարում ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Նախօրեին Հակակոռուպցիոն կոմիտեի գործողություններից հետո իրավիճակը շարունակում է լարված մնալ Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանում: Հիշեցնենք, որ մայիսի 14-ին Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կաշառք տալու, ստանալու մեղադրանքով ձերբակալվել են Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ամբիոններից մեկի վարիչն ու դասախոսական կազմից մի շարք անձինք: Ձերբակալված ամբիոնի վարիչը Գայանե Եղիազարյանն էր: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նախօրեին Եղիազարյանը համալսարան է գնացել այնպիսի դեմքով, որ կարծես որեւէ բան տեղի չի ունեցել: Մենք տեղեկացանք, որ ողջ համալսարանական անձնակազմը շատ վաղուց տեղյակ է Եղիազարյանի ենթադրյալ կոռուպցիոն մեխանիզմներից: Ամիսներ շարունակ Հակակոռուպցիոն կոմիտեն ուսումնասիրել է համալսարանում առկա բողոքներն ու նրան ձերբակալել: Հիմա քննություն է ընթանում: Ըստ համալսարանի ներսից ստացված տեղեկությունների՝ իրավապահների ուշադրության կենտրոնում են հայտնվել մի շարք դասախոսներ, որոնց նկատմամբ իրականացվել են ստուգողական եւ քննչական գործողություններ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Մարտունի քաղաքում իրականացվող փողոցաշինական աշխատանքները վերածվել են բնապահպանական աղետի: ArmLur.am-ը շարունակում է բազմաթիվ ահազանգեր ստանալ, որոնք վերաբերում են քաղաքի երբեմնի կանաչապատ գոտիների ոչնչացմանը: «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հկ նախագահ Անահիտ Գեւորգյանը, ով գործընթացին հետեւում է սկզբից, ArmLur.am-ի հետ զրույցում հայտնեց, որ ամեն ինչ սկսվել է դեռ 2025 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ Երեւանյան փողոցի վերանորոգմամբ: Նրա խոսքով՝ 2019 թվականից այստեղ տնկվել էր մոտ 250 եղեւնի, որից 150-ը՝ արծաթափայլ: Սկզբում բնակիչներին հավաստիացրել են, թե ծառերը տեղափոխվում են ավելի ապահով տարածք եւ վերանորոգումից հետո կվերատնկվեն: Սակայն իրավիճակը կտրուկ փոխվել է 2026 թվականի ապրիլին: «Ապրիլի 20-21-ին Մյասնիկյան փողոցում սկսեցին տեղահանել հսկա մեծ ծառերը, որոնք 40-50 տարվա պատմություն ունեն»: Տիկին Անահիտը շեշտում է, որ միայն բողոքի ձայն բարձրացնելուց հետո համայնքապետարանը սկսեց փաստաթղթավորել գործընթացը:



Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄԵՆՔ ՀԻՄԱ ԳՆՈՒՄ ԵՆՔ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ»

ArmLur.am-ը զրուցել է ՔՊ խմբակցության պատգամավոր Հրաչյա Հակոբյանի հետ:

- Ձեզ տեսնում ենք քարոզարշավին: Ի՞նչ աջակցություն եք ցուցաբերում Ձեր թիմակիցներին:

- Ի՞նչ աջակցություն պետք է ցուցաբերեմ. կուսակցական մարդ եմ, եւ իմ հնարավորությունների չափով աջակցում եմ: Ինչով կարողանում ենք, բնականաբար, աջակցում ենք:

- Ի՞նչ տպավորություններ ունեք քարոզարշավից, ինչպե՞ս է ընթանում այն:

- Շատ դրական: Տպավորությունները միայն դրական են:

- Պարբերաբար հրապարակվում են ընտրակաշառքի եւ վարչական ռեսուրսի կիրառման վերաբերյալ գաղտնալսումներ: Վերջերս հրապարակվեց նաեւ մի ձայնագրություն, որտեղ, ըստ ընդդիմության, դասախոսը պարտադրում է ուսանողներին մասնակցել ՔՊ քարոզարշավին: Սա ինչպե՞ս եք մեկնաբանում, եւ արդյո՞ք սա իրավական գնահատականի կարիք չունի:

- Ձայնագրությանը ծանոթ չեմ, դրա համար չեմ կարող մեկնաբանել: Բայց կարող եմ ասել, որ մենք բացառում ենք ցանկացած վարչական ռեսուրսի կիրառում: Մենք չենք ողջունում եւ դատապարտում ենք նման գործելաոճը, առավել եւս՝ մարդկանց պարտադրելով հավաքների տանելը: Սակայն կոնկրետ այդ ձայնագրությունը չեմ մեկնաբանի, որովհետեւ չեմ լսել:

- ՔՊ-ի հնարավորությունները ինչպե՞ս եք գնահատում: Հունիսի 7-8-ից հետո ի՞նչ պատկեր եք տեսնում, եւ ո՞ւմ եք համարում ձեր հիմնական մրցակիցը:

- Մեր շանսերը գնահատում եմ բավականին բարձր: Թիվ ասելը միշտ էլ անշնորհակալ գործ է, բայց կարծում եմ՝ 60 տոկոսից ավելի պետք է ստանանք: Ինչ վերաբերում է հիմնական մրցակցին, դժվար է ասել: Կային ուժեր, որոնց կարելի էր մրցակից համարել, բայց երբ նրանց ղեկավարները սկսեցին խոսել, պարզ դարձավ, որ չեն կարող լուրջ մրցակից լինել: Երբ մարդը խոսում է «1 տոննա սնկի» մասին, հետո սկսում է ասել, թե դա ընդամենը ենթադրություն էր, դժվար է նման մակարդակի ուժին հիմնական մրցակից համարել:

- Բայց ընդդիմադիր ուժերը հայտարարում են, որ հենց իրենք են հաղթելու առաջիկա ընտրություններում:

- Երբ ասում են, թե մարդիկ «հիմար» են, որովհետեւ դպրոց են կառուցում կամ ճանապարհ, այդպիսի մտածողությամբ մարդիկ ինչպե՞ս կարող են լինել մեր հիմնական մրցակիցը: Եթե ինչ-որ մեկը կարծում է, թե դպրոց կամ ճանապարհ կառուցելը սխալ է, ապա նման մոտեցումը չի կարող լուրջ քաղաքական այլընտրանք լինել:

- Ընդդիմությունը նաեւ նշում է, որ իշխանության ներկայացուցիչների կողմից ատելության խոսք է հնչում: Օրինակ՝ օգտագործվել է «համբալ» բառը: Սա ինչպե՞ս եք գնահատում:

- Նախ՝ այդ բառը առաջինը հենց իրենք են օգտագործել: Հետո արդեն մարդիկ սկսեցին նույն ձեւով անդրադառնալ տվյալ անձին: Ինչ վերաբերում է վիրավորանքներին, պետք է նաեւ հասկանալ կոնտեքստը:

- Բայց նույն կերպ Նիկոլ Փաշինյանը Գագիկ Ծառուկյանի մասին ասել է՝ «ով ընտրում է Ծառուկյանին, ընտրում է Լուկաշենկոյին»: Սա ատելության խոսք չէ՞:

- Ես դրա մեջ վիրավորանք չեմ տեսնում: Դա քաղաքական գնահատական է: Իսկ եթե որեւէ մեկը վիրավորվել է, դա արդեն իր ընկալումն է:

- Իսկ երբ Գագիկ Ծառուկյանն ասում է՝ «ով ընտրում է ՔՊ-ին, ընտրում է Ալիեւին», դա Ձեզ համար վիրավորակա՞ն է:

- Ընդհանրապես, նման խոսույթը պետք է բացառել: Մենք հիմա գնում ենք խաղաղության ճանապարհով, եւ երկու տարի է՝ Ադրբեջանի հետ հարաբերություններում խաղաղության օրակարգ ունենք: Նման հայտարարությունները ճիշտ չեն: Մնացած մասով չեմ ցանկանում մեկնաբանել: Դա իմ իրավունքն է:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը մայիսի 18-ին գումարեց հերթական նիստը: Օրակարգում ընդգրկված էր 2 հարց՝

1. Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքների եւ եզրակացության հրապարակման վերաբերյալ:

2. Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի մասնակցի՝ «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ հայտի վարկանիշային քվեարկությունը:

Հաստատելով նիստի օրակարգը՝ ՀՌՀ մոնիթորինգի եւ վերահսկողության վարչության պետ Լիաննա Դոխիկյանը ներկայացրեց Հանձնաժողովի իրականացրած տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից Ազգային ժողովի 2026թ. հունիսի 7-ի հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ մշտադիտարկման արդյունքները եւ եզրակացությունը: Նիստին ներկա էր նաեւ Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) ներկայացուցիչ Ռաֆֆի Էլլիոթը: Հարցի ներկայացումից հետո Հանձնաժողովը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 12-րդ մասի եւ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ եւ 11-րդ հոդվածների դրույթներով որոշեց հրապարակել տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ԱԺ հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ եզրակացությունը՝ համաձայն N1 հավելվածի, եւ սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները՝ համաձայն N2 հավելվածի:

Հաջորդիվ ամփոփվեցին հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի արդյունքները:Հանձնաժողովի անդամները փակ վարկանշային քվեարկությամբ գնահատեցին մրցույթի միակ մասնակից «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ-ին, որի ներկայացուցիչները ներկա չէին նիստին: Մրցույթի արդյունքներով մասնակցին չհաջողվեց հաղթահարել անցողիկ շեմը՝ ստանալով 32 միավոր (անցողիկը՝ 40-ն էր): Սույն որոշումները ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող են բողոքարկվել Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովին կամ ՀՀ վարչական դատարան:

ԴԱՐՁԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ

Հայաստանը եւ Լիտվան, այս պահից սկսած, ռազմավարական գործընկերներ են: Այս մասին Լիտվայի ԱԳ նախարար Կեստուտիս Բուդրիսի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ ասաց Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը: «Սա մի ձեւաչափ է, որը մեզ հնարավորություն կտա ավելի լրջացնելու եւ՛ մեր քաղաքական երկխոսությունը, եւ՛ համագործակցությունը, բայց նաեւ ավելի համապարփակ մոտենալու ոլորտային համագործակցությանը»,- ասել է նա:

ՈՐՈՎ Է ՔԿ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի խորհրդական է նշանակվել Ամբակում Գրիգորյանը: ArmLur.am-ը ուսումնասիրել է նորանշանակ պաշտոնյայի կենսագրությունն ու հայտարարագրած ունեցվածքը:

Ամբակում Սեյրանի Գրիգորյանը ծնվել է 1978 թվականի սեպտեմբերի 30-ին Երեւանում: 1999 թվականին ավարտել է Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: 1999-2001 թվականներին ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Ամբակում Գրիգորյանի աշխատանքային ուղին հիմնականում կապված է եղել իրավապահ համակարգի հետ: 2000-2005 թվականներին աշխատել է ՀՀ դատախազության Մարտակերտի կայազորի զինվորական դատախազությունում՝ որպես քննիչ-ստաժոր, ապա քննիչ: Այնուհետեւ եղել է Երեւանի կայազորի զինվորական դատախազության քննիչ, Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների դատախազության դատախազ եւ ավագ դատախազ:

2009-2013 թվականներին զբաղեցրել է ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարեւոր գործերի քննիչի պաշտոնը, իսկ հետագայում ղեկավար պաշտոններ է զբաղեցրել ոստիկանության եւ Քննչական կոմիտեի համակարգերում: 2018-2021 թվականներին եղել է ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության պետ:

2021 թվականից տեղափոխվել է արդարադատության համակարգ, որտեղ նախ զբաղեցրել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալի պաշտոնը, ապա՝ քրեակատարողական ծառայության պետի պաշտոնը:

Հայտարարագրի համաձայն՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ Ամբակում Գրիգորյանը համատեղ սեփականությամբ Երեւանում ունի բնակարան, ավտոկայանատեղի եւ անհատական բնակելի տուն: Բնակարանն ու ավտոկայանատեղին ձեռք են բերվել 2022 թվականի մայիսի 11-ին, իսկ բնակելի տունը՝2011 թվականի հոկտեմբերի 28-ին:

Նրա բանկային հաշիվների մնացորդը կազմել է 1 միլիոն 501 հազար 4 դրամ: Կանխիկ միջոցները հայտարարագրվել են 10 հազար ԱՄՆ դոլար եւ 25 միլիոն դրամ: Հաշվետու ժամանակահատվածի եկամուտները կազմել են 27 միլիոն 605 հազար 767 դրամ: Միեւնույն ժամանակ Գրիգորյանը հայտարարագրել է նաեւ 45 միլիոն 381 հազար 735 դրամի վարկային պարտավորություն, որը հիմնականում ուղղված է եղել բնակարանի եւ ավտոկայանատեղիի ձեռքբերմանը: Վարկի մարմանն ուղղված վճարումները կազմել են 6 միլիոն 676 հազար 570 դրամ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

«ԴԵՊՈՒՏԱՏՆ ԻՄ ԲԱՆԸ ՉԻ»

Լեւոն Հարությունյանը դուրս է եկել «Քոչարի ազգային վերածնունդ եւ ազգի զարթոնք» կուսակցությունից: Այս մասին ArmLur.am-ին նա հայտնել է՝ հաստատելով իր ինքնաբացարկը, սակայն հրաժարվել է մանրամասներ ներկայացնել: «Հասկացա, որ դեպուտատն իմ բանը չի, ամեն մարդ պիտի իրա գործով զբաղվի»,-նշել է Հարությունյանը:

Նա չի հստակեցրել կուսակցությունից դուրս գալու պատճառները՝ միայն նշելով, որ դրանք միայն իրեն են հայտնի:

Հիշեցնենք, որ «Քոչարի ազգային վերածնունդ եւ ազգի զարթոնք» կուսակցության ցուցակը գլխավորում է Արտակ Սարգսյանը:

ԻՐԻՆԱ ԱՏԱՆՅԱՆ

ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է «ՄՈՒԿ ՏՇԵԼ»

«Բոլորին դեմ եմ» կուսակցությունը մայիսի 20-ին՝ ժամը 13:30-ին, Հանրապետության հրապարակում՝ կառավարության շենքի դիմաց, նախատեսում է անցկացնել «մուկ տշելու» ակցիա: Կուսակցության տարածած հայտարարության մեջ նշվում է, որ միջոցառման ընթացքում «չեն ծախսվելու պետական բյուջեի միջոցներ, չեն տրվելու պարգեւավճարներ, ինչպես նաեւ չի տուժելու ոչ մի մուկ»:

Հիշեցնենք, որ սա առաջին նմանատիպ նախաձեռնությունը չէ. կուսակցությունը նախորդ ակցիայի ընթացքում եւս ծաղրական գործողություններ է իրականացրել, այդ թվում՝ «ջուր ծեծել» բառի բուն իմաստով: Այդ ժամանակ նրանք նաեւ մեղադրանքներ էին հնչեցրել քաղաքային իշխանությունների հասցեին՝ պնդելով, թե դիտավորյալ կերպով դատարկվել է Կարապի լիճը:

Կուսակցությունը քաղաքացիներին կրկին հրավիրում է մասնակցելու նախաձեռնությանը՝ այն ներկայացնելով որպես բողոքի ձեւ:

ՄԵՎ ԾՈՎՈՒՄ ՄԿՄՎԵԼ ԵՆ ՔՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռումինիայի ռազմածովային ուժերի շտաբը հայտարարել է, որ ՆԱՏՕ-ի վեց երկրների ռազմածովային անձնակազմը մասնակցում է Սեւ ծովում մեկնարկած Opex-26 (Գործառնական փորձարարություն) ինքնավար ծովային անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) միջազգային վարժանքներին:

Ծովային անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) փորձարկմանն ուղղված միջազգային վարժանքները տեղի են ունենում մայիսի 18-29-ը Մանգալիայի ռազմական նավահանգստում եւ Սեւ ծովի մի քանի շրջաններում, ասվում է հայտարարության մեջ:

Վարժանքներին մասնակցում են Բուլղարիան, Կանադան, Պորտուգալիան, Ռումինիան, ԱՄՆ-ը եւ Թուրքիան, ինչպես նաեւ քաղաքացիական ծովային անօդաչու թռչող սարքեր արտադրող ընկերությունների ներկայացուցիչներ:

ՔԱՐՈՂԱՐՇԱՎԻ «ՏԱՊԱԼՄԱՆ» ՄԵՂԱՎՈՐԸ

ԱՐԱԲԿԻՐԻ ԹԱՂԱՊԵՏԻ ՉԱԽՈՂՈՒՄԸ

Արաբկիրում Փաշինյանի քարոզարշավը վերածվեց նյարդային փորձության: Երեւանի Արաբկիր վարչական շրջանում տեղի ունեցած նախընտրական քարոզարշավը իշխանությունների համար ամենեւին էլ այն «ջերմ ընդունելությունը» չէր:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցը ուղեկցվեց քաղաքացիների բացահայտ դժգոհությամբ, բողոքներով եւ քննադատություններով, ինչի հետեւանքով իրավիճակը բավական լարված դարձավ: Քաղաքացիների արձագանքները ակնհայտորեն ազդեցին Նիկոլ Փաշինյանի տրամադրության վրա: Քարոզարշավի ընթացքում հնչող դժգոհությունները եւս մեկ անգամ ցույց տվեցին, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դիրքերը Արաբկիրում այնքան ամուր չեն, որի գլխավոր մեղավորը նաեւ Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Սուրեն Վարոսյանն է:

Այս պատմության մեջ ուշագրավ է մեկ այլ հանգամանք եւս. իշխանության համար կարեւոր վարչական շրջանում անգամ չհաջողվեց ապահովել վերահսկվող ու «կոկիկ» մթնոլորտ: Եւ այստեղ հարցեր են առաջանում հենց Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Սուրեն Վարոսյանի աշխատանքի արդյունավետության վերաբերյալ: Ակնհայտ է, որ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարը վաղուց է «տապալել» կառավարումը, նա վարչական շրջանի բնակիչների հետ չի շփվում, ոչ ոք նրան վարչական շրջանում չի տեսել: Բնակիչների հետ հանդիպումների ժամանակ Վարոսյանն ակնհայտ արհամարհանք է ցույց տալիս, բնակիչների հարցերին լուծումներ չի տալիս: Ու դա էր նաեւ պատճառը, որ Արաբկիր վարչական շրջանի բնակիչները իրենց խնդիրներով «հարձակվեցին» Նիկոլ Փաշինյանի վրա: Վարոսյանը տապալել է ողջ վարչական շրջանի կառավարումը:

Ո՞վ է Սուրեն Վարոսյանը

Սուրեն Վարոսյանը պետական համակարգում հայտնվել է դեռ երիտասարդ տարիներից: 2012-2017 թվականներին եղել է Ազգային Ժողովին կից երիտասարդական խորհրդարանի անդամ, ապա աշխատել սփյուռքի եւ արտաքին գործերի նախարարություններում:

Քաղաքական կարիերայի աճը հատկապես արագացել է 2018-ից հետո: 2020-2021 թվականներին նա եղել է փոխվարչապետի արարողակարգի պատասխանատուն, իսկ 2021-2024 թվականներին արդեն զբաղեցրել է վարչապետ Նիկոլ Փաշինյանի արարողակարգի պատասխանատուի պաշտոնը:

Փաստորեն, Վարոսյանը ոչ թե տեղական ինքնակառավարման համակարգից ձեւավորված կադր է, այլ ուղիղ վարչապետի թիմից Արաբկիր «գործուղված» պաշտոնյա: 2024 թվականի հուլիսին նշանակվել է Արաբկիրի ղեկավարի տեղակալ, ընդամենը երկու ամիս անց՝ պաշտոնակատար, իսկ 2025 թվականին արդեն ստացել է վարչական շրջանի ղեկավարի ամբողջական պաշտոնը:

Բնակարան՝ միլիոններով, մեքենա՝ կասկածելի գնով

Սակայն առավել ուշագրավը Վարոսյանի հայտարարագրած ունեցվածքն է: Ըստ 2024 թվականի տարեկան հայտարարագրի՝ նա նույն տարում ձեռք է բերել Երեւանում գտնվող բնակարան՝ 35 միլիոն 740 հազար դրամ արժողությամբ: Բնակարանը գնվել է «ՄԼ Մայնինգ» ընկերությունից:

Միեւնույն ժամանակ հայտարարագրել է նաեւ 2019 թվականի արտադրության JEEP մակնիշի ավտոմեքենա՝ ընդամենը 2 միլիոն 650 հազար դրամ արժեքով: Շուկայական գները հաշվի առնելով՝ նման արժեքը առնվազն հարցեր է առաջացնում՝ արդյոք մեքենան իրականում այդքան է արժեցել, թե հայտարարագրվել է զգալիորեն ցածր գնով:

Վարոսյանը հայտարարագրել է նաեւ՝

- 3 միլիոն 200 հազար դրամ բանկային ավանդ
- 1 միլիոն 217 հազար 986 դրամ բանկային հաշիվների մնացորդ
- 120 հազար դրամ կանխիկ միջոց
- 1800 ԱՄՆ դոլար կանխիկ
- 2200 եվրո կանխիկ

Հետաքրքիր է, որ նրա ամբողջ տարվա եկամուտները կազմել են 12 միլիոն 284 հազար դրամ, մինչդեռ նույն տարում ձեռք է բերել տասնյակ միլիոնների անշարժ գույք եւ ավտոմեքենա:

Թեեւ հայտարարագրվել է նաեւ 24 միլիոն դրամից ավելի վարկային պարտավորություն՝ բնակարանի գնման հետ կապված, nonetheless հարցը մնում է օդում կախված. ինչպե՞ս է պետական համակարգում կարիերա կառուցած պաշտոնյան կարճ ժամանակում կարողացել ձեւավորել նման ակտիվներ:

Արաբկիրի նախորդ օրվա մթնոլորտը ցույց տվեց մեկ կարեւոր իրողություն. վարչական ռեսուրսը միշտ չէ, որ կարող է փոխարինել հանրային վստահությանը: Իսկ Սուրեն Վարոսյանի համար սա, թերեւս, առաջին լուրջ քաղաքական քննությունն էր, որը նա ակնհայտորեն չհանձնեց:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՆ ԵԿԵԼ

Ադրբեջանն ու Վրաստանը համաձայնագիր են ստորագրել Բաքու-Սուփսա նավթատարի գործունեությունը վերսկսելու վերաբերյալ, հայտնել է Վրաստանի էկոնոմիկայի նախարարությունը սոցիալական ցանցերում: «Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի՝ Բաքու կատարած այցի ընթացքում ստորագրվել է նոր համաձայնագիր, որը նախատեսում է Բաքու-Սուփսա նավթատարի վրացական հատվածի շահագործման պայմանագրի կնքում, որը կապահովի Կենտրոնական Ասիայից Եվրոպա նավթի տարանցման վերսկսումը Վրաստանի միջոցով եւ զգալիորեն կավելացնի մեր երկրի բյուջեի եկամուտները»,-ասվում է հայտարարության մեջ:

Նշվում է, որ վրացական կողմից փաստաթուղթը ստորագրել է էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Մարիամ Կվրիվիշվիլին, իսկ ադրբեջանական կողմից՝ էկոնոմիկայի նախարար Միխայիլ Ջաբարովը եւ էներգետիկայի նախարար Փարվիզ Շահբազովը:

ՏԵՍԱՆՅՈՒԹ ՄԻՆԻՈՆՆԵՐՈՎ

Գանայում Իրանի դեսպանատունը տեսանյութ է հրապարակել, որտեղ մինիոնները լվանում են ամերիկյան դրոշը՝ի պատասխան ԱՄՆ նախագահի կողմից Իսլամական Հանրապետության վրա հարվածների ուղղությունը ցույց տվող քարտեզի հրապարակմանը:

Մայիսի 18-ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Truth Social-ում հրապարակել է ԱՄՆ դրոշի պատկեր՝ կարմիր նետերով, որոնք ցույց են տալիս Իրանի վրա հարվածները:

Իրանի դեսպանատան արհեստական ինտելեկտի կողմից ստեղծված տեսանյութում մինիոնները՝ «Անճոռնի ես» մուլտֆիլմի հերոսները, լվանում են ԱՄՆ դրոշը հրշեջ խողովակով եւ այն փոխարինում իրանական դրոշով՝ տիեզերքի ֆոնին:

«Թրամփը պատկերել է սպառնալիքները մեր քարտեզի վրա: Մենք ցույց ենք տվել գալակտիկան», - ասվում է X-ում դեսպանատան գրառման մակագրության մեջ:



ԻՐԱՎԱԿԱՆ

ԶԵԿՈՒՅՑ

ՉԵՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

Իրավաբանների միջազգային հանձնաժողովը (International Commission of Jurists) հրապարակել է Ադրբեջանում արդարադատության համակարգի խնդիրների վերաբերյալ զեկույց՝ «Արդարադատությունը ճնշման ներքո. փաստաբանների անկախությունը եւ արդար դատաքննության իրավունքը Ադրբեջանում» թեմայով:

Քննարկելով Ադրբեջանի արդարադատության համակարգում առկա բազմաթիվ խնդիրներն ու խախտումները՝ զեկույցում մանրամասնորեն վերլուծվել են Բաքվում դատվող հայերի դեմ իրականացված դատավարությունները՝ միջազգային չափանիշների լույսի ներքո: «Լեռնային Ղարաբաղի նախկին պաշտոնյաների դեմ իրականացվող դատավարությունները այս մտահոգությունները ներկայացնում են իրենց ամենասուր դրսեւորմամբ»,- նշվում է զեկույցում:

Հստակ արձանագրվում է, որ այդ դատավարությունները չեն համապատասխանում մարդու իրավունքների միջազգային իրավունքի չափանիշներին: «Հրապարակային հասանելի աղբյուրների համաձայն՝ հայերի դատավարություններն ուղեկցվել են այնպիսի գործելակերպերով, որոնք խախտում են արդար դատաքննության հիմնարար երաշխիքները: Դրանք անցկացվել են ռազմական դատարանում՝ առանց որեւէ հիմնավորման, թե ինչու քաղաքացիական անձանց նկատմամբ պետք է կիրառվեր ռազմական իրավազորություն: Մեղադրյալները զրկվել են իրենց ընտրած փաստաբանի արդյունավետ օգնությունից: Պետության կողմից նշանակված փաստաբանները չեն արձագանքել վատ վերաբերմունքի այն ապացույցներին, որոնց անձամբ ականատես են եղել: Գործի նյութերը կամ չեն տրամադրվել, կամ տրամադրվել են այնպիսի լեզվով, որը մեղադրյալները չեն հասկացել: Պաշտպանության միջնորդությունները համակարգված կերպով մերժվել են՝ առանց հիմնավորման, եւ չեն ներառվել դատավարության արձանագրություններում: Թարգմանությունը եղել է անբավարար կամ ընդհանրապես բացակայել է, իսկ հանրային հասանելիությունը, այդ թվում՝ հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցիչների համար, մերժվել է:

Այս համակարգային թերությունները ցույց են տալիս, թե ինչպես կարող են գործադիր իշխանության ազդեցությունը, դատախազության վերահսկողությունը եւ փաստաբանների անկախության սահմանափակումները միասին հանգեցնել այնպիսի դատավարությունների, որոնք չեն համապատասխանում արդար դատաքննության, կողմերի հավասարության եւ հանրային վերահսկողության միջազգային չափանիշներին ու մարդու իրավունքների պահանջներին: Ինչպես վերլուծվում է այս զեկույցում, այս դատավարությունները ոչ թե առանձին շեղումներ են հաստատված պրակտիկայից, այլ արտացոլում են ավելի լայն համակարգային խնդիրներ»,-ընդգծվում է զեկույցում:

Լրացուցիչ նշվում է նաեւ, որ դատավարությունները հիմնականում անցկացվել են փակ դռների հետեւում, թույլատրվել է միայն պետական լրատվամիջոցների ներկայությունը. միջազգային դիտորդներին, օտարերկրյա լրատվամիջոցներին եւ մեղադրյալների ընտանիքի անդամներին արգելվել է մասնակցել դատական նիստերին. «Թափանցիկության բացակայության պայմաններում առկա տեղեկատվության մեծ մասը վերաբերում է Ռուբեն Վարդանյանի առանձին դատավարությանը: Վարդանյանը հանրային գործառույթներ է ստանձնել Լեռնային Ղարաբաղում միայն 2022 թվականի վերջին, սակայն դատախազությունը նրան մեղադրանքներ է առաջադրել՝ սկսած 1988 թվականից, չնայած այն փաստին, որ այդ ժամանակ նա Մոսկվայի պետական համալսարանի ուսանող էր:1988 թվականին իբր տեղի ունեցած գործողությունների համար Վարդանյանի նկատմամբ քրեական հետապնդումը՝ ավելի քան երեք տասնամյակ անց եւ միայն այն բանից հետո, երբ նա ստանձնեց հանրային պաշտոն, առաջացնում է հիմնարար մտահոգություններ օրինականության սկզբունքի տեսանկյունից: Այդ ժամանակահատվածում Վարդանյանը որեւէ քաղաքական պաշտոն չէր զբաղեցնում եւ չէր կարող կանխատեսել, որ այդ տարիների ենթադրյալ գործողությունները հետագայում կարող են հիմք դառնալ քրեական մեղադրանքների համար՝ քաղաքական գործունեություն սկսելուց հետո»:

Զեկույցը մի շարք առաջարկություններ է ներկայացրել Ադրբեջանի գործադիր իշխանություններին, դատախազությանը, դատական իշխանություններին եւ խորհրդարանին: Դատական իշխանություններին հորդորվում է «Ապահովել, որպեսզի Լեռնային Ղարաբաղի նախկին պաշտոնյաների գործերով ցանկացած բողոքարկում քննվի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից: Ապահովել գործի նյութերի տրամադրումը պաշտպանության կողմին մեղադրյալի համար հասկանալի լեզվով եւ ապահովել պաշտպանության նախապատրաստման համար բավարար ժամանակ եւ հնարավորություններ բոլոր դատավարական փուլերում, ներառյալ բողոքարկման ընթացքում»:

Զեկույցը նաեւ կոչ է անում Եվրոպայի խորհրդին՝ ստանալ մուտք՝ բողոքարկման հնարավոր դատական նիստերը դիտարկելու նպատակով:

ԼՈՒՐԵՐ

ԽՈՇՏԱՆԳԵԼ ԵՆ

ArmLur.am-ը զրուցել է փաստաբան Մ-նացական Մարուքյանի հետ: Նա մեզ հետ զրույցում նշեց, որ խոշտանգել են Շիրակի մարզում 6 հոգու կյանք խլած BMW-ի վարորդին, ում հայրը, ի դեպ, նոր է մահացել:

Ապրիլի 10-ին ողբերգական վթար էր տեղի ունեցել Շիրակի մարզի Աղին բնակավայրի մոտակայքում: BMW եւ Opel ավտոմեքենաների բախման հետեւանքով 6 մարդ էր զոհվել, նրանցից 2-ը՝ երեխա, եւս 5 մարդ, որոնցից 3-ը՝ երեխա, մարմնական վնասվածքներով տեղափոխվել էին հիվանդանոց: Հոսպիտալացվածների վիճակը գնահատվել էր ծայրահեղ ծանր կամ ծանր:

Շիրակի մարզի Աղին բնակավայրի տարածքում տեղի ունեցած ավտովթարի դեպքի առթիվ նախաձեռնվել էր քրեական վարույթ, եւ Քննչականի փոխանցմամբ՝ այն հարուցվել է Քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ «ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթեւեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ»: Նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ:

Քննչական կոմիտեն փոխանցել էր, որ նախաքննության ընթացքում մեկ անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում. վերջինս BMW-ի վարորդն է, որը կալանավորված է եւ այս պահին գտնվում է հիվանդանոցում: Վթարի հետեւանքով նա կորցրել էր մորը, իսկ երեկ սրտի կաթվածից մահացել է նրա հայրը:

Տեսանյութը՝ ArmLur.am կայքում

Ք. Մ.

ԿԱՍԵՑՐԵԼ Է

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցներն Արմավիրի եւ Արագածոտնի մարզերի 3 ջերմոցում արձանագրել են մի շարք խախտումներ: Արմավիրի մարզի Արաքս գյուղում Ա.Ա.-ն, Արշալույս գյուղում Ս.Հ.-ն ջերմոցային տնտեսությունների ոռոգումն ապահովելու նպատակով առանց ջրօգտագործման թույլտվությունների շահագործել են ապօրինի խորքային 1-ական հոր: Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղում «Նարինե Օնիկի Մանուկյան» Ա/Ձ-ն ջերմոցային տնտեսության գործունեությունն իրականացրել է առանց անշարժ աղբյուրներից վնասակար նյութեր մթնոլորտային օդ արտանետման թույլտվության: Տեսչական մարմնի Արմավիրի, Արագածոտնի տարածքային բաժինների պետերի որոշումներով ապօրինի խորքային հորերի ու կաթսայատան գործունեությունը կասեցվել են:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ԿԱՄԱՎՈՐ ՀԱՆՁՆՈՒՄՆԵՐ

Ոստիկանության ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ ապօրինի պահվող զենք-զինամթերքի հանձնման հերթական դեպքերն են գրանցվել: Միաժամանակ, ՆԳՆ ոստիկանությունը հորդորում է քրեական պատասխանատվությունից խուսափելու համար կամավոր հանձնել ապօրինի զենք-զինամթերքը: Քրեական ոստիկանության Արմավիրի մարզային վարչության ծառայողների բացատրական աշխատանքի արդյունքում ոստիկանություն զանգած քաղաքացին հայտնել էր, որ զենք-զինամթերք է թողել Արմավիր քաղաքի գերեզմանատան հարակից տարածքում՝ ջրատարի մոտ: Քրեական ոստիկանները քաղաքացու նշած վայրում հայտնաբերել են «Կալաշնիկովի» ինքնաձիգ, նռնակ՝ պայթուցիչով, տարբեր տրամաչափի 125 փամփուշտ, փամփշտատուփեր: Ապօրինի պահվող զենք-զինամթերք է կամավոր հանձնվել նաեւ Քրեական ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության ծառայողների բացատրական աշխատանքի արդյունքում: Ոստիկանություն զանգած քաղաքացին զենք-զինամթերք էր թողել Վերին Երզնկա- Ծաղկավանք ճանապարհին: Քրեական ոստիկանները քաղաքացու նշած հատվածում՝ ջրատարի մեջ, հայտնաբերել են դիպուկահար հրազեն, «Ֆ-1» տիպի 2 նռնակ, տարբեր տրամաչափի 51 փամփուշտ: Ապօրինի պահվող զենք-զինամթերքը կամավոր հանձնելու ուղղությամբ բնակչության շրջանում տարվող բացատրական աշխատանքները շարունակվում են:

4 ԿԳ ԹՄՐԱՄԻՋՈՑ

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողներն ու Կոտայքի մարզի պարեկները համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում մայիսի 18-ին Երեւան-Աշտարակ ճանապարհին հայտնաբերել, թմրամիջոց ձեռք բերելու, պահելու եւ իրացնելու հիմնավոր կասկածանքով ձերբակալել եւ Համայնքային ոստիկանության Մաշտոցի բաժին են տեղափոխել Երեւանի բնակիչ՝ 18-ամյա եւ Վայոց ձորի մարզի բնակիչ՝ 20-ամյա երկու երիտասարդի: 20-ամյա երիտասարդի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 4 կիլոգրամ մարիխուանա տեսակի թմրամիջոցի նմանվող զանգված: Երիտասարդները եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

Կատարվում է նախաքննություն:

● *Անցած 3 օրում գրանցվել է 37 ավտովթար. 49 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

«ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ» ԱՌԹԻՎ

Ամեն տարի մայիսի վերջին դպրոցական «Վերջին զանգ» միջոցառման կապակցությամբ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների շրջանավարտների ծնողները մեծ գումարներ են տրամադրում շրջանավարտների տոնական հագուստի, ավարտական հանդեսի, տեսանկարահանման, լուսանկարահանման, ավարտական ճոխ քեֆի, դպրոցի տնօրենի ու դասղեկի համար նվերներ գնելու եւ այլնի համար: Սոցիալապես անապահով ընտանիքները չունեն շրջանավարտների համար արվելիք մեծ ծախսերի գումարներ, սակայն չեն կարող իրենց զավակի դպրոցական «Վերջին զանգի» համար այդ ծախսը չանել, ստիպված են պարտքով կատարել այդ ծախսը կամ ընտանիքի այլ կարիքների համար նախատեսված գումարները տրամադրել այդ նպատակով: Ամեն տարի «Վերջին զանգի» առթիվ դպրոցների շրջանավարտներից մեծ դրամահավաքության երեւույթին հետեւում է Տավուշի մարզպետի աշխատակազմը, որի ենթակայությամբ են գործում մարզի հանրակրթական դպրոցները՝ բացառությամբ ավագ դպրոցների եւ վարժարանների: Մարզպետարանը հետեւում, սակայն միջամտության որեւէ միջոց չի ձեռնարկում շրջանավարտներից անհարկի չափով գումարներ հավաքելու կապակցությամբ, որպեսզի դպրոցներում ավարտական միջոցառումն ավելի քիչ գումարներով անցկացնեն:

Մայիսի 5-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ կատարել. «Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող դպրոցներում այս տարի որքա՞ն է կազմում «Վերջին զանգի» կապակցությամբ շրջանավարտների դրամահավաքության չափը: Տավուշի մարզպետի աշխատակազմը ի՞նչ միջոցներ է ձեռնարկում հանրակրթական դպրոցներում շրջանավարտներից մեծ գումարներ հավաքելու դեմ»: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող դպրոցների տնօրեններին տրվել են հանձնարարականներ դրամահավաքությունը բացառելու մասին, իսկ եթե կան դպրոցներ, որտեղ գումար են հավաքում, ապա դա ծնողների նախաձեռնությամբ է, որի մասին տեղեկատվություն չունենք»: Մարզպետի աշխատակազմը դրամահավաքությունը բացառելու ի՞նչ հանձնարարականներ է տվել հանրակրթական դպրոցներին, եթե դպրոցներում դրամահավաքությունը շարունակվում է: Տավուշի մարզպետի աշխատակազմում մարզի դպրոցների աշակերտներից կատարվող դրամահավաքության դեպքերը փորձում են արդարացնել, որ դրանք կատարվել են ծնողների նախաձեռնությամբ: Ի՞նչ է նշանակում՝ մարզպետի աշխատակազմը տեղեկատվություն չունի իր ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներում կատարվող դրամահավաքության դեպքերից, էլ ինչո՞ւ են մարզպետարանի 66 պաշտոնյաները պետբյուջեից համեմատաբար բարձր աշխատավարձ եւ տարեկան շուրջ 65 միլիոն դրամ պարգեւավճար ստանում, եթե իրենց աշխատանքային պարտականությունները վատ են կատարում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱԿ

550,000 ՄԱՐԴ՝ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ) կողմից հրապարակված 2026թ. պարենային ապահովության եւ խոցելիության գնահատման (ՊԱԽԳ) համաձայն՝ Հայաստանի տնային տնտեսությունների պարենային ապահովությունը դրական աճ է գրանցել: Երկրի ողջ տարածքում անցկացված ուսումնասիրությունը դրական միտումներ է արձանագրում, ինչպես նաեւ նշում այն հիմնական ոլորտները, որտեղ նպատակային միջամտությունները կարող են օգնել առաջընթացի ամրապնդման հարցում:

ՊԱԽԳ-ին մասնակցել է Երեւանի եւ Հայաստանի բոլոր մարզերի 4,210 տնային տնտեսություն: Գնահատումը վերլուծում է տեղական բնակչության եւ Ղարաբաղից տեղահանված հայերի շրջանում պարենային ապահովությանն առնչվող իրավիճակը, դրա խթաններն ու միտումները, ինչպես նաեւ նույնականացնում բնակչության պարենային անապահով խմբերին եւ վեր հանում նրանց հիմնական առանձնահատկությունները: Գնահատման արդյունքները դրական տնտեսական եւ սոցիալական տեղաշարժեր են արձանագրում՝ ի համեմատ նախորդ՝2024թ. գնահատման տվյալների: Պարենային ապահով տնային տնտեսությունների թիվն աճել է՝26%-ից հասնելով 33%-ի, մինչդեռ պարենով չապահովված տնային տնտեսություններինը՝20%-ից նվազել է մինչեւ 18%: Պարենային ապահովության սահմանային շեմին գտնվող տնային տնտեսությունների ցուցանիշերը եւս բարելավվել են, քանի որ ավելի շատ ընտանիքներ են հասել երկարաժամկետ կայունության մակարդակի: Բացի այդ, կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունների շրջանում պարենային անապահովությունը 23%-ից նվազել է 21%, ինչը վկայում է խոցելի խմբերի շրջանում էական առաջընթացի մասին: Այդ ցուցանիշը նաեւ հաստատում է, որ պարենային անապահովության կայունացման եւ նվազեցման ուղղությամբ իրականացվող շարունակական ջանքերն ունեն չափելի ազդեցություն:

«Այս արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանը շարժվում է դրական ուղղությամբ: Տնային տնտեսությունների շրջանում պարենային ապահովության աճը համակցվում է սոցիալ-տնտեսական վերականգնման ողջունելի միտումներով», - նշեց Հայաստանյան գրասենյակի ղեկավար եւ ՊՀԾ ներկայացուցիչ տիկին Լեյլա Մելիուն: «Միեւնույն ժամանակ, ՊԱԽԳ-ն փաստահավաք գործառույթ է իրականացնում՝ գործընկերներին օգնելով կենտրոնացնել աշխատանքն այնտեղ, որտեղ այն կարող է թիրախավորված ազդեցություն ունենալ, հատկապես այն տնային տնտեսությունների համար, որոնք դեռեւս լիովին դիմակայուն չեն դարձել տնտեսական ճնշումների եւ հնարավոր ցնցումների նկատմամբ»:

Չնայած ընդհանուր առաջընթացին՝ Հայաստանում մոտավորապես 550,000 մարդ շարունակում է մնալ պարենային անապահովության մակարդակում, իսկ պարենային ապահովության սահմանային շեմին գտնվող բնակչությունը շարունակում է խոցելի մնալ ցնցումների հանդեպ: 2026թ. ՊԱԽԳ-ը տեղահանված բնակչության շրջանում երկարաժամկետ սոցիալ-տնտեսական ինտեգրման լայնածավալ միտումներ է արձանագրել: Տեղահանված հարցվողների 83%-ը պլանավորում է մնալ Հայաստանում, ինչը կտրուկ աճ է 2024 թվականի 63%-ի համեմատ: Բացի այդ, տեղահանված տնային տնտեսությունների 76%-ն այժմ ունի առնվազն մեկ աշխատող անդամ, ինչն առաջընթաց է երկու տարի առաջ գրանցված 47.6%-ի համեմատ:

Այս տվյալները մատնանշում են, որ առկա է ինքնաբավությանն ուղղված խոստումալից միտում: Միեւնույն ժամանակ դրանք ընդգծում են, որ շարունակական սոցիալական պաշտպանությունը եւ տնտեսական աջակցությունը կարեւոր են տնային տնտեսությունների մշտական կայունությունն ապահովելու համար: Կարեւորվում է գենդերազգայուն պարբերական մոնիթորինգի դերը՝ քարտեզագրելու համար, թե ինչպես են կայուն եկամուտները, սոցիալական ապահովության ցանցերը եւ սնունդն առավել հասանելի դառնում կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունների համար:

2020թ. ի վեր ՊՀԾ-ի գնահատումները հիմք են ծառայել ՀՀ կառավարության, միջազգային դոնորների եւ զարգացման ոլորտի գործընկերների համար: Որպես կարողությունների փոխանցումը եւ պետական տնօրինումը քաջալերող գործընթացի կարեւոր մաս՝ ՊՀԾ-ն ակտիվորեն խորացնում է իր համագործակցությունը Հայաստանի վիճակագրական կոմիտեի հետ՝ մինչեւ 2028թ. ՊԱԽԳ գործիքակազմը, մեթոդաբանությունները եւ - տեխնիկական փորձառությունը պետական մարմիններին փոխանցելու նպատակով:

ՊԵՏՔ Է ԲԱՑԱՌԵՆ

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը խիստ մտահոգիչ եւ վտանգավոր է գնահատում նախընտրական քարոզարշավի ընթացքում հանրային խոսույթում տարածվող՝ վիրավորանք, անհանդուրժողականություն եւ բռնություն քարոզող խոսույթը:

Ժողովրդավարական հասարակությունում քաղաքական մրցակցությունը պետք է հիմնված լինի գաղափարների, ծրագրերի եւ հանրությանը հուզող խնդիրների շուրջ բովանդակային քննարկումների վրա: Մինչդեռ՝ ամենօրյա ռեժիմով արձանագրվում են մի շարք դեպքեր, երբ քաղաքական բանավեճը տեղափոխվում է փոխադարձ վիրավորանքի, թշնամանքի, անհանդուրժողականության եւ հանրային պառակտման վտանգավոր դաշտ:

Նման խոսույթը խորացնում է հասարակական բեւեռացումը, խաթարում հանրային համերաշխությունը եւ վտանգում խաղաղ համակեցության մթնոլորտը: Առանձնակի մտահոգիչ է, որ քաղաքական ուժերի եւ հանրային գործիչների կողմից կիրառվող ագրեսիվ ու վիրավորական բառապաշարը տարածվում է հասարակության տարբեր խմբերում՝ նպաստելով լարվածության եւ անհանդուրժողականության խորացմանը:

Մարդու իրավունքների պաշտպանը եւս մեկ անգամ ընդգծում է, որ կարծիքի արտահայտման ազատությունը բացարձակ իրավունք չէ եւ չի կարող օգտագործվել այլոց արժանապատվությունը նվաստացնելու, ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն տարածելու, բռնություն քարոզելու նպատակով:

Մարդու իրավունքների պաշտպանը շեշտում է, որ հանրային եւ քաղաքական գործիչները, հաշվի առնելով իրենց խոսքի ազդեցությունն ու տարածման լայն շրջանակը, պետք է առավել բարձր պատասխանատվություն դրսեւորեն իրենց հանրային խոսույթի նկատմամբ, սեփական խոսքով եւ վարքագծով նպաստեն փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության եւ իրավունքի գերակայության վրա հիմնված հանրային միջավայրի ձեւավորմանը՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք կոնկրետ իրավիճակում խոսքի առանձին տեսակը կարող է հանգեցնել իրավական պատասխանատվության կառուցակարգերի գործադրման, թե ոչ:

Մարդու իրավունքների կրթության եւ իրավունքների խթանման գործառույթի համատեքստում ՄԻՊ հաստատությունն անընդհատ է շեշտում խոսքի ազատության սահմանները խախտող խոսույթի դրսեւորումների վտանգավորությունը իրավունքների խթանման եւ պաշտպանության ամբողջ համակարգի տեսանկյունից, մինչդեռ քաղաքական դերակատարների՝ հակառակ տրամաբանության վրա կառուցված վարքագիծը խաթարում է համապատասխան արժեքների վրա հիմնված մարդու իրավունքների համակարգի կայացումը:

Մարդու իրավունքների պաշտպանը կոչ է անում քաղաքական բոլոր ուժերին, նրանց ներկայացուցիչներին, պաշտոնատար անձանց եւ հանրային գործիչներին դադարեցնել վիրավորանք, անհանդուրժողականություն եւ բռնություն քարոզող խոսքի ցանկացած դրսեւորում, բացառել հասարակությունը բեւեռացնող եւ լարվածությունը խորացնող խոսույթի տեսակները, իսկ քաղաքական պայքարը կառուցել բացառապես ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների եւ փոխադարձ հարգանքի հիման վրա:

● *Ըստ վիճակագրական տվյալների՝ մայիսի 15-ից 18-ը Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերվել է 3 անհետ կորած:*

ՄԱՐԶ

ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱԿԱՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական խմբերը Տավուշի մարզի քաղաքներում եւ գյուղերում նախընտրական քարոզչություն են անում, կուսակցության բուկլետները բաժանում: Նրանց քարոզարշավը կատարվում է նախընտրական օրենսդրության խախտումով: ՔՊ-ական քարոզիչները երբեմն ներգրավում են բնակավայրերի վարչական ղեկավարների, որոնք իշխող կուսակցության անդամ են: Դիլիջան համայնքի ղեկավար, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Դիլիջանի տարածքային կազմակերպության ղեկավար Դավիթ Սարգսյանի տարածած տեսանյութում երեւում է, որ Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի վարչական ղեկավար Մխիթար Հովհաննիսյանը աշխատանքային օրը, աշխատանքային ժամին փոխանակ իր աշխատանքային պարտականություններով զբաղվի, ՔՊ-ի քարոզչական խմբի հետ Հաղարծին գյուղում իշխող կուսակցության նախընտրական բուկլետներ է բաժանում: Նաեւ հակաքարոզչություն է կատարվում: Սահմանամերձ գյուղերի բնակիչների մեջ լուրեր են տարածվել, որ Սամվել Կարապետյանի գլխավորած «Ուժեղ Հայաստան» դաշինքի՝ իշխանության գալուց հետո պետական աջակցությամբ, վարկային ծրագրով, 16 եւ 21 միլիոն դրամ ֆինանսավորմամբ սահմանամերձ բնակավայրերում առանձնատներ կառուցելու ծրագիրը դադարեցվելու է: Դա ապատեղեկատվություն է: ՔՊ-ական քարոզիչները սահմանամերձ գյուղերի բնակիչներին սահմանին տեւական ժամանակ կրակոցներ չլինելու իրողությունը ներկայացնում են որպես Ադրբեջանի հետ հաստատված կայուն խաղաղություն, որին տեր կանգնելու համար բնակիչները հունիսի 7-ին կայանալիք Ազգային Ժողովի ընտրություններում պետք է քվեարկեն ՔՊ կուսակցության օգտին: Դա մանիպուլյացիա է, Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիր չի կնքվել, Հայաստան-Ադրբեջան հարաբերություններում միջազգային հեղինակություն ունեցող երաշխավորներ չկան: Խաղաղություն չկա, տեւական հրադադար է, որը ցանկացած ժամանակ Ադրբեջանը կարող է խախտել, Հայաստանից Ադրբեջանի պահանջները չեն սպառվում:

ՉԱԽՈՂՎԱԾ ԾՐԱԳԻՐ

Կառավարությունը որոշվել է 422 միլիոն 743,6 հազար դրամ հատկացնել Տավուշի մարզի 5 մանկապարտեզների՝ Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզի, Հաղարծնի մանկապարտեզի, Կոթիի մսուր-մանկապարտեզի, Սարիգյուղի մանկապարտեզի, Բերդավանի մսուր-մանկապարտեզի շենքերի վերակառուցման կամ հիմնանորոգման համար: Տավուշի մարզպետարանից տեղեկացել եմ, որ այդ 5 մանկապարտեզները ընդգրկված են «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրում: Այս տարվա սեպտեմբերին նախատեսված է ավարտել «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագիրը, սակայն ապրիլի 2-ին որոշվել է այդ ծրագրով 5 մանկապարտեզների նորոգումը ֆինանսավորել: «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրով ՀՀ-ում ընդամենը 65 դպրոց է կառուցվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔ

ԴԻՄԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻՆ ՈՒ ԴԻՏՈՐԴՆԵՐԻՆ

«Հայաստան» դաշինքը դիմել է Հայաստանում հավատարմագրված դեսպաններին ու դիտորդներին.

«Հունիսի 7-ի ընտրությունների նախընթաց ժամանակահատվածն ընթանում է ներքաղաքական մթնոլորտի անթույլատրելի լարվածությամբ եւ ակնհայտորեն դուրս է եկել քաղաքական պայքարի շրջանակներից:

Գործող վարչախմբին մերժող եւ աներկբա թափ առնող հանրային դրսեւորումներին զուգահեռ՝ ռեժիմը փորձում է լռեցնել քաղաքական ընդդիմախոսներին, չեզոքացնել քաղաքացիների խոսքի ազատությունը, ճնշել ազատ կամարտահայտումը, երկրում խորացնել վախի մթնոլորտն ու ներազգային թշնամանքը: Խորացող ավտորիտար ռեժիմի կողմից որդեգրված հակասահմանադրական եւ քրեորեն հետապնդելի վարքն ու գործիքակազմն անհնար են դարձնում ընտրությունների ազատությունն ու մրցակցայնությունը:

Վարչախումբը բացառապես մեկ նպատակ է հետապնդում՝ ընդդիմադիր ուժերի եւ այլախոհների նկատմամբ ուժի եւ վարչական ռեսուրսների անթույլատրելի կիրառմամբ հասնել վերարտադրության: Այս նպատակին են ծառայում պատժիչ եւ հակասահմանադրական գործողությունները, որոնք ներառում են՝

- Քրեական հետապնդումներ եւ հալածանքներ, ինստիտուցիոնալ ռեպրեսիաներ:
- Ընտրովի արդարադատություն, վարչական ռեսուրսի բացահայտ չարաշահում:
- Դատական իշխանության ակնհայտ կախվածություն, ինչը թույլ չի տալիս, որպեսզի իշխանության հակասահմանադրական գործողություններն արժանանան իրավական գնահատականի:
- Վարչախմբի ղեկավարի կողմից դատախազությանը եւ իրավապահ համակարգին տրված բացահայտ ու հրապարակային պատժիչ հրահանգներ, այդ թվում՝ քաղաքական ընդդիմախոսներին բանտարկելու կամ պատժելու հանձնարարություններ:

/17.05.2026 թ. հոգեբուժարանում կախվել է ՀՀ քաղաքացի, որին իրավապահ մարմինները մեկ օր առաջ մեկուսացրել էին Ն. Փ.-ի քարոզչական պաստառը վնասելու մեղադրանքով/:

- Հանրության, առանձին քաղաքացիների եւ ընդդիմադիր առաջատար ուժերի առաջնորդների նկատմամբ հրապարակային ահաբեկում, հաշվեհարդարի սպառնալիքներ եւ կոչեր:
- Ոչ նորմատիվ բառապաշար, հասցեական թիրախավորում, ատելության խոսք, ներազգային պառակտվածության ու թշնամանքի մթնոլորտի խորացում, վախի եւ ահաբեկման մթնոլորտի ձեւավորում:
- Մայիսի 18-ին, ուղիղ եթերում, Նիկոլ Փաշինյանը քաղաքական հիմնական երեք ընդդիմախոսների, ինչպես նաեւ սովորական քաղաքացիների հասցեին հնչեցնում է աննախադեպ սպառնալիքներ, որոնք ուղեկցվում են վրեժխնդրության կոչերով եւ ոչ նորմատիվ հայհոյախառն խոսքով:

Ցավոք, միջազգային կազմակերպությունների կրկնակի ստանդարտները, կանխակալ մոտեցումներն ու ոչ հասցեական վարքագիծը խորացնում են Հայաստանում անպատժելիության մթնոլորտը, վարկաբեկում միջազգային ինստիտուտները, սասանում ժողովրդավարության նկատմամբ հավատը՝ լրջագույնս կասկածի տակ դնելով հավաքական Արեւմուտքի՝ Հայաստանում իրապես ժողովրդավարական սկզբունքներով իշխանության ձեւավորման նկատմամբ շահագրգռվածությունը:

Դիմում ենք Հայաստանում հավատարմագրված դեսպանատներին եւ դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային կազմակերպություններին՝ ակնկալելով համարժեք վերաբերմունք եւ գնահատական:

Ակնկալում ենք անհետաձգելի հանդիպում՝ առավել հանգամանալից քննարկելու, ներկայացնելու եւ գնահատելու իշխանությունների կողմից որդեգրված հակասահմանադրական ընթացքը»:

ԴՈՒՐՍ ԵԿԱՎ ԵԶՐԱՓԱԿԻՉՆԵՐ

«Յունիսպորտ» ակումբը շարունակում է գրանցել հաջողություններ հայկական ֆուտզալում՝ վստահ մրցելույթներով հանդես գալով ինչպես Հայաստանի գավաթի, այնպես էլ բարձրագույն խմբի առաջնություններում:

Ֆուտզալի Հայաստանի գավաթի խաղարկության կիսաեզրափակիչ փուլում «Յունիսպորտը» 3:1 հաշվով հաղթեց «Սիեվնին»՝ նվաճելով եզրափակիչի ուղեգիր: Դուբլի հեղինակ դարձավ Սարգիս Մարգարյանը, մեկ գոլ էլ խփեց Էդվարդ Մկրտչյանը: Այսպիսով, «Յունիսպորտը» եւ «ՊրոԴեվը» կվիճարկեն Հայաստանի գավաթը: Եզրափակիչը տեղի կունենա մայիսի 20-ին:

Մայիսի 17-ին կայացած ֆուտզալի Հայաստանի բարձրագույն խմբի փլեյ-օֆֆի կիսաեզրափակիչ փուլի պատասխան հանդիպումներում առաջնության առաջատար «Յունիսպորտը» 12:3 հաշվով գերազանցեց «Լոգիկոնին», գրանցեց 20-րդ անընդմեջ հաղթանակը ու դուրս եկավ եզրափակիչ:

«Յունիսպորտ» ակումբի գլխավոր հովանավորը Յունիբանկն է: Պրոֆեսիոնալ սպորտը մշտապես Յունիբանկի ուշադրության կենտրոնում է եւ հանդիսանում է բանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կարեւոր ուղղություններից մեկը: Յունիբանկը հետեւողականորեն աջակցում է հայկական սպորտի զարգացմանը՝ նպաստելով մարզիկների առաջընթացին, երիտասարդ սերնդի ակտիվ կենսակերպին եւ առողջ ապրելակերպի տարածմանը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՋՈԼԻԻ ԴՈՒՍՏՐԸ

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՀՈՐ ԱԶԳԱՆՈՒՆԻՑ

Հոլիվուդյան հայտնի դերասաններ Անջելինա Ջոլիի եւ rեդ Փիթի ավագ դուստրը՝ Զահարա Մառլի Ջոլին, ավարտել է ԱՄՆ-ի հեղինակավոր Սփելման քոլեջը՝ ստանալով հոգեբանության բակալավրի աստիճան: Քոլեջի 139-rդ ավարտական արարողությունը տեղի է ունեցել մայիսի 17-ին՝ Ատլանտայում:

Թեեւ ավարտական ծրագրում նրա անունը նշված էր որպես «Զահարա Մառլի Ջոլի-Փիթ», բեմ բարձրանալիս նրան ներկայացրել են որպես «Զահարա Մառլի Ջոլի»: Այս քայլը լայն քննարկումների առիթ է դարձել, քանի որ Զահարան արդեն մի քանի անգամ հրապարակային կերպով հրաժարվել է օգտագործել հոր ազգանունը:

Դեռեւս 2023 թվականին, երբ նա միացավ «Ալֆա Կապպա Ալֆա» ուսանողական կազմակերպությանը, ներկայացել էր միայն մոր ազգանունով: Շատերը դա կապում են Բրեդ Փիթի եւ Անջելինա Ջոլիի երկարատեւ ու աղմկահարույց բաժանման պատմության հետ:

Զահարան վերջերս նաեւ հուզիչ ելույթ էր ունեցել «Ամենասիրելի մայր եւ դուստր» միջոցառման ժամանակ, որտեղ խոսել էր մոր՝Անջելինա Ջոլիի մասին: Նա նշել էր, որ իրենց կապը յուրահատուկ եւ շատ խորն է:

«Ես որդեգրվել եմ 6 ամսականում եւ ստացել եմ ամենասիրող ընտանիքը: Մայրս մեզ մեծացրել է բարության, մարդկանց օգնելու եւ մշտապես զարգանալու արժեքներով», - ասել էր Զահարան: Նրա խոսքով՝ այսօր աշխարհում բարությունն ու մարդասիրությունը հաճախ թերագնահատվում են, եւ ինքը երախտապարտ է, որ ունեցել է մայր, ով սեփական օրինակով ցույց է տվել, թե ինչ է նշանակում լինել արժանապատիվ մարդ:

Զահարան նաեւ Անջելինա Ջոլիին անվանել է «ամենաանձնազոհ, սիրող եւ հասկացող կինը», ում ինքը հպարտությամբ մայր է կոչում:

Հիշեցնենք, որ Անջելինա Ջոլին եւ Բրեդ Փիթը միասին ունեն վեց երեխա՝ Մեդոքսը, Փաքսը, Զահարան, Շայլոն եւ երկվորյակներ Վիվիենն ու Նոքսը:

Վերջին տարիներին ընտանիքը հաճախ է հայտնվել լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում՝ հատկապես դերասանների դատական գործընթացների եւ երեխաների՝ մոր հետ ավելի մտերիմ հարաբերությունների պատճառով:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆԵՅՄԱՐԻ ՄԵԾ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Բրազիլիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին հրապարակել է այն 26 ֆուտբոլիստների անունները, որոնք ընդգրկվել են ԱԱ-2026-ի վերջնական հայտացուցակում, տեղեկանում ենք armsport-ից:

Հայտացուցակում ընդգրկվել է նաեւ «Բարսելոնա»-ի եւ ՊՍԺ-ի նախկին հարձակվող Նեյմարը, որն այժմ հանդես է գալիս բրազիլական «Սանթոս»-ում: Աշխարհի առաջնության եզրափակիչ մրցաշարը կկայանա հունիսի 11-ից հուլիսի 19-ը ԱՄՆ-ում, Կանադայում եւ Մեքսիկայում: Վիճակահանության արդյունքներով Բրազիլիայի ընտրանին հայտնվել է C խմբում, որտեղ ուժերը կչափի Մարոկկոյի, Հայիթիի եւ Շոտլանդիայի հավաքականների հետ:

Բրազիլիայի հավաքականի վերջնական հայտացուցակը՝

Դարպասապահներ՝ Ալիսոն («Լիվերպուլ», Անգլիա), Էդերսոն («Ֆեներբահչե», Թուրքիա), Վեւերտոն («Պալմեյրաս»):

Պաշտպաններ՝ Ալեքս Սանդրո («Ֆլամենգո»), Բրեմեր («Յուվենտուս», Իտալիա), Դանիլո («Ֆլամենգո»), Դուգլաս Սանթոս («Զենիթ», Ռուսաստան), Գաբրիել Մագալյանս («Արսենալ», Անգլիա), Իբանյես («Ալ Ահլի», Սաուդյան Արաբիա), Լեո Պերեյրա («Ֆլամենգո»), Մարկինյոս (ՊՍԺ, Ֆրանսիա), Ուեսլի («Ռոմա», Իտալիա):

Կիսապաշտպաններ՝ Բրունո Գիմարայնս («Նյուքասլ», Անգլիա), Կազեմիրո («Մանչեսթեր Յունայթեդ», Անգլիա), Դանիլո («Բոտաֆոգո»), Ֆաբինյո («Ալ Իթիհադ», Սաուդյան Արաբիա), Լուկաս Պակետա («Ֆլամենգո»):

Հարձակվողներ՝Էնդրիկ («Լիոն», Ֆրանսիա), Գաբրիել Մարտինելի («Արսենալ», Անգլիա), Իգոր Տիագո («Բրենտֆորդ», Անգլիա), Լուիս Էնրիկե («Զենիթ», Ռուսաստան), Մաթեուս Կունյա («Մանչեսթեր Յունայթեդ», Անգլիա), Նեյմար («Սանթոս»), Ռաֆինյա («Բարսելոնա», Իսպանիա), Ռայան («Բորնմութ», Անգլիա), Վինիսիուս Ժունիոր («Ռեալ Մադրիդ», Իսպանիա):

Կառլո Անչելոտիի գլխավորած թիմն ԱԱ-2026-ում իր առաջին հանդիպումը կանցկացնի հունիսի 13-ին՝ մրցելով Մարոկկոյի դեմ: Հունիսի 19-ին բրազիլացիները կհանդիպեն Հայիթիին, իսկ խմբային փուլի վերջին տուրում՝ հունիսի 24-ին, կխաղան Շոտլանդիայի ընտրանու հետ:

ՓՈԽԱՐԻՆՈՂԸ ԳՏՆՎԱԾ Է

Լոնդոնի «Չելսի»-ի նախկին գլխավոր մարզիչ Էնցո Մարեսկան բանավոր համաձայնեցրել է «Մանչեսթեր Սիթի»-ի հետ համագործակցության պայմանները: Այս մասին X սոցիալական ցանցում հայտնել է հայտնի մարզական լրագրող եւ ինսայդեր Ֆաբրիցիո Ռոմանոն, գրում է armsport-ը: Ըստ աղբյուրի՝իտալացի մասնագետն արդեն տեւական ժամանակ է, ինչ համարվում է «քաղաքաբնակների» գլխավոր մարզչի պաշտոնի առաջնահերթ թեկնածուն եւ հենց նա էլ կփոխարինի Խոսեպ Գվարդիոլային: Սպասվում է, որ առաջիկայում Մարեսկան «Մանչեսթեր Սիթիի» հետ կկնքի 3 տարվա պայմանագիր: Մարեսկայի աշխատանքային կենսագրության մեջ են մտնում նաեւ «Լեսթեր Սիթին», «Վեսթ Հեմ Յունայթեդը», «Սեւիլիան» եւ այլ ակումբներ: Հատկանշական է, որ իտալացին անծանոթ չէ մանչեսթերյան ակումբին. նա արդեն աշխատել է «Մանչեսթեր Սիթիում»՝ 2022-2023 թվականներին զբաղեցնելով գլխավոր մարզչի օգնականի պաշտոնը, ինչպես նաեւ գլխավորելով «քաղաքաբնակների» երիտասարդական թիմը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ Է

Ֆուտբոլային փորձագետ Ալեքսանդր Բուբնովը խոսել է այն մասին, թե եվրոպական որ առաջնությունները կարող են լավագույնս համապատասխանել «Կրասնոդար»-ի եւ Հայաստանի ազգային հավաքականի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանին, հայտնում է armsport-ը: «Նա ստեղծված է Իսպանիայի համար: Անգլիայում նրա համար նույնիսկ ծանր կլինի: Հնարավոր է՝Գերմանիայում ավելի հեշտ լինի, բայց այնտեղ թիմերը բաց ֆուտբոլ են խաղում: Եթե ելնենք առաջնությունում պայքարի, ֆիզիկական մենամարտերի ու պրեսինգի մակարդակից, ինձ թվում է՝ Իտալիայի առաջնությունն ավելի մեղմ է: Այստեղ համեմատելու բան կա: Ունենք երկու ականավոր հայ ֆուտբոլիստ՝ Մխիթարյանն ու Սպերցյանը: Մխիթարյանն այժմ խաղում է եւ վատ հանդես չի գալիս: Նա մտածում է՝ երկարաձգե՞լ պայմանագիրը Իտալիայի չեմպիոն «Ինտեր»-ի հետ, թե՞ ոչ: Իմ կարծիքով՝ Սպերցյանն ավելի ուժեղ է Մխիթարյանից: Եթե մենք նրան «Ինտեր» ենք տեղափոխում, ստացվում է, որ նրան կարելի է տանել իտալական ցանկացած թոփ ակումբ»,- Բուբնովի խոսքերն է մեջբերում «Коммент.Шоу» յութուբյան ալիքը:

Հիշեցնենք, որ ընթացիկ մրցաշրջանում Սպերցյանը «Կրասնոդար»-ի կազմում բոլոր մրցաշարերում անցկացրել է 41 հանդիպում՝ դառնալով 14 գոլի եւ 18 գոլային փոխանցման հեղինակ: Հայ ֆուտբոլիստի պայմանագիրն ակումբի հետ նախատեսված է մինչեւ 2029 թվականը: Transfermarkt պորտալի համաձայն՝ կիսապաշտպանի տրանսֆերային արժեքը գնահատվում է 25 միլիոն եվրո:

«ԻՆՏԵՐ»-Ի ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱՌՈՒՄԸ

Միլանի «Ինտեր»-ը սոցիալական ցանցերի իր պաշտոնական էջերում հատուկ հրապարակում է կատարել՝ անդրադառնալով թիմի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանին, տեղեկացնում է armsport-ը: Իտալական ակումբի մամուլի ծառայությունը տեսանյութ է ներկայացրել, որտեղ պատկերված է հայ ֆուտբոլիստի մուտքը խաղադաշտ Ա սերիայի ընթացիկ մրցաշրջանում նվաճած չեմպիոնական տիտղոսի տոնակատարության ժամանակ: Հրապարակման մեջ ուշագրավ է այն փաստը, որ միլանյան ակումբը տեսանյութին կից գրառումը կատարել է հայերենով: Պաշտոնական էջում մասնավորապես նշված է. «Ուշադրությո՛ւն՝ մտնում է Իտալիայի չեմպիոնը: Հետեւեք մեզ հայկական բովանդակության համար»:

Հիշեցնենք, որ Իտալիայի առաջնության 37-րդ տուրում չեմպիոնությունն արդեն ապահոված «Ինտերը» ոչ-ոքի էր խաղացել «Վերոնայի» հետ, իսկ հանդիպման լավագույն ֆուտբոլիստ էր ճանաչվել Մխիթարյանը: Խաղից հետո հայ կիսապաշտպանը նշել էր, որ դեռ խաղալու քաղց ունի, եւ հունիսին սպառվող պայմանագրի ֆոնին իր ապագան առաջիկա օրերին կքննարկի ակումբի ղեկավարության հետ:

● *Խամաճիկների պետական թատրոնում մայիսի 20-ին՝ ժամը 17:00-ին, կկայանա «Թոմ Սոյերի արկածները» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Սովորողը բնություններին չներկայանալու դեպքում ինչպե՞ս կարող է հետագայում վերահանձնել:

Լիլիթ Գասպարյան, 41 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. 4-րդ դասարանի ավարտին 1-4-րդ դասարաններում սովորողի տարեկան բնութագրերի հիման վրա Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ ինքնաշխատ եղանակով իրականացվում է ատեստավորում:

4-րդ դասարանի այն սովորողը, որը տարեվերջյան ամփոփման արդյունքում հանրակրթության պետական չափորոշչով սահմանված՝ կրթական առաջին աստիճանի ակնկալվող վերջնարդյունքների՝ առաջադիմության բնութագրող գնահատման միջոցով արձանագրված ցածր արդյունքներ ունի, փոխադրվում է 5-րդ դասարան եւ 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ընթացքում ընդգրկվում է երկարօրյա խմբում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 13-ի N 38-Ն հրամանի:

9-րդ դասարանի սովորողն ավարտական քննությանը չմասնակցելու դեպքում վերաքննություն է հանձնում տվյալ ուսումնական տարվա հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-25-ն ընկած ժամանակահատվածում: Ավարտական քննական առարկաների թեստերը կազմվում են Գնահատման եւ թեստավորման կենտրոնի կողմից: Վերաքննությունների արդյունքները կրթության կառավարման տեղեկատվական համակարգ մուտքագրվում են ոչ ուշ, քան օգոստոսի 30-ը:

12-րդ դասարանի սովորողը 2025-2026 ուսումնական տարում չի ավարտում դպրոցը, եթե վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ ուսումնական առարկայից ստացել է 1-3 (գնահատման 10-միավորային սանդղակից) կամ պետական ավարտական քննություններից 1-7 (գնահատման 20-միավորային սանդղակից) միավոր կամ չի մասնակցել վերաքննություններին:

12-րդ դասարանի սովորողը 2026-2027 ուսումնական տարվանից սկսած պետական ավարտական քննություններին չմասնակցելու դեպքում վերաքննություն է հանձնում տվյալ ուսումնական տարվա հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-25-ն ընկած ժամանակահատվածում: Պետական ավարտական քննական առարկաների առաջադրանքները կազմվում են ԳԹԿ-ի կողմից: Վերաքննությունների արդյունքները կրթության կառավարման տեղեկատվական համակարգ մուտքագրվում են ոչ ուշ, քան օգոստոսի 30-ը: Վերաքննությունները հանձնելուց հետո որեւէ ուսումնական առարկայից 1-3 (գնահատման 10-միավորային սանդղակից) կամ պետական ավարտական քննություններից 1-7 (գնահատման 20-միավորային սանդղակից) միավոր ստացած լինելու, կամ վերաքննություններին չմասնակցելու դեպքում սովորողը ստանում է միջնակարգ կրթության ատեստատ եւ համարվում է դպրոցն ավարտած՝ տվյալ առարկայից ուսումնական տարվա ընթացքում ստացած գնահատականների հիման վրա:

ՀՀ ԿԳՄՍ

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ ոլորտներով կարող եմ ստանալ ուսանողական վարկեր:

Մայիս Սիմոնյան, 25 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Այս ծրագիրը կրթության ֆինանսավորման այլընտրանքային գործիք է, որ հնարավորություն կտա Ձեզ ձեռք բերել վարկեր ուսումնառության ընթացքում եւ դրանց հիմնական մասը մարել ուսումնառության ավարտից հետո: Ծրագրի շրջանակում ուսանողներին վարկեր են տրամադրվում 12 տոկոս տարեկան տոկոսադրույքով, որից 2 տոկոսը սուբսիդավորում է պետությունը, իսկ մեկ տարվա ընթացքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների դեպքում սուբսիդավորումը կկազմի 3 տոկոս: Վարկերը տրամադրվում են 10 տարի մարման ժամկետով՝ սահմանելով արտոնյալ ժամկետ՝ ուսումնառության ընթացքում առավելագույնը 4 տարվա համար, ինչը նշանակում է, որ այս ընթացքում մայր գումարի մարում տեղի չի ունենում, վճարվում են միայն տոկոսադրույքները: Յուրաքանչյուր ուսանողի հաշվով նախատեսված է առավելագույնը 1.800.000 դրամ՝ առավելագույնը 4 մասնաբաժնով, սակայն ոչ ավելի, քան 450 հազար դրամը՝ կախված յուրաքանչյուր մասնագիտության համար սահմանված ուսման վարձավճարի չափից: Ծրագրի մասին առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն:

ՀՀ ֆինանսների նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Խոշոր ավտովթար Երեւանում. Իսակովի պողոտայում «BMW»-ն բախվել է «Mercedes»-ին, ապա մխրճվել թիվ 61 երթուղին սպասարկող «Zhongtong» ավտոբուսի հետնամասի մեջ. կան վիրավորներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 1 + 5 + 14 + 19
	Կոտայքի լեռներ	+ 2 + 5 + 15 + 18
	Կոտայքի նախալեռներ	+ 5 + 8 + 16 + 19
	Գեղարքունիք	+ 1 + 5 + 14 + 18
	Լոռի	+ 2 + 6 + 18 + 22
	Տավուշ	+ 3 + 6 + 18 + 21
	Արագածոտնի լեռներ	+ 1 + 4 + 13 + 16
	Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 8 + 16 + 21

	Արարատ	+ 7 + 10 + 18 + 21
	Արմավիր	+ 7 + 10 + 20 + 23
	Վայոց ձորի լեռներ	+ 1 + 4 + 13 + 16
	Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 10 + 20 + 24
	Սյունիքի լեռներ	0 + 3 + 13 + 16
	Սյունիքի նախալեռներ	+ 3 + 7 + 17 + 20
	Սյունիքի հովիտներ	+ 9 + 13 + 23 + 26
	Երեւան	+ 7 + 9 + 21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.05.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*